ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N15-16-2

ՀՖՖ

ՖՈՒՏԶԱԼԻ և ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

31 հոկտեմբերի 2015թ ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ս.Ավետիսյանի

Կոմիտեի	Ս.Ավետիսյան
Անդամներ	Ռ.Նազարեթյան
	Լ.Հայրապետյան
Քարտուղար՝	Խ.Զարգարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. 2014-2015թթ ՀՀ ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության լավագուն ֆուտբոլիստի ընտրությունը չի կատարված: /Զեկուցող Խ.Զարգարյանը/
2. 2015-2016թթ ՀՀ ֆուտզալի լավագույն ֆուտբոլիստի որոշման կարգի մասին: /Զեկուցող Խ.Զարգարյանը/
3. ՀՀ Ֆուտզալի հավաքական թիմի մասնակցությունը 2015-2016թթ առաջնությանը: /Զեկուցող Խ.Զարգարյանը/
4. Գործնական և տեսական սեմինարներ մասնակից թիմերի և կանանց թիմերի մարզիչների կազմակերպման մասին: /Զեկուցող Ռ.Նազարեթյան/
5. Գործնական և տեսական սեմինարներ ՀՖՖ մրցավարների կազմակերպման մասին: /Զեկուցող Ռ.Նազարեթյան/
6. 2015-2016թթ ՀՀ ֆուտզալի առաջնության մասնակից թիմերին տրամադրել ժիլետներ/Զեկուցող Ռ.Նազարեթյան/
7. Կանանց ֆուտբոլի <<Հրազդան և Գյումրի աղջիկներ 2>> թիմերի մարզիչների հետագա աշխատանքի վերաբերյալ: /Զեկուցող Լ.Հայրապետյան/
8. Կանանց ֆուտբոլի ամառային մրցաշարում լավագույն ֆուտբոլիստների ցուցակի հաստատում: /Զեկուցող Խ.Զարգարյան/
9. ՀՀ Ֆուտզալի Ազգային հավաքական թիմի մրցելույթների արդյունքները Աշխարհի առաջնության նախընտրական փուլում:/Զեկուցող Ռ.Նազարեթյան/
10. ՀՀ կանանց հավաքական Մ16 թիմի մրցելույթների արդյունքները Եվրոպայի առաջնության ընտրական փուլում: /Զեկուցող Լ.Հայրապետյան/

Որոշումներ՝

1. ՀՖՖ լրատվական բաժինը չի կատարել ՀՀ ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության լավագուն ֆուտբոլիստի ընտրությունը:
   Որոշվեց՝ դիմել առաջին փոխնախագահ գործադիր տնօրեն Ա.Մինասյանին ձեռնարկել միջոցներ հետագայում նման բացթողումներից խուսափելու համար:

2. Ներկայացվեց ՀՀ ֆուտզալի լավագույն ֆուտբոլիստի որոշման կարգի նախագիծը, որը մշակվել է ՄԿԱ բաժնում:
   Որոշվեց՝ հավանություն տալ նախագծին՝ լրացնելով ՖԿՖ կոմիտեի առաջարկությունները և ներկայացնել հաստատման:
3. Առաջարկեց, ՀՀ Ֆուտզալի ազգային հավաքական թիմը, ընդգրկել առաջնության կազմում:
   Որոշվեց՝դիմել ՀՖՖ նախագահ Ռ.Հայրապետյանին ֆուտզալի հավաքական թիմը ներգրավել առաջնության խաղացանկում առանց միավորների հաշվարկման:
4. Որոշվեց՝ գործնական և տեսական սեմինարները մասնակից թիմերի և կանանց թիմերի մարզիչների սկսել ս/թ նոյեմբերի 6-ին ավարտել 7-ին:

5. Որոշվեց՝ դիմել ՀՖՖ նախագահ Ռ.Հայրապետյանին հրահանգել մրցավարական բաժնին, անցկացնել գործնական և տեսական սեմինարներ մրցավարների համար:

6. Որոշվեց դիմել առաջին փոխնախագահ գործադիր տնօրեն Ա.Մինասյանին, 2015-2016թթ ՀՀ ֆուտզալի առաջնության մասնակից թիմերին տրամադրել ժիլետներ:

7. Լ.Հայրապետյանը ներկայացրեց մարզիչների կատարած աշխատանքը 3-րդ եռամսյակում:
   Որոշվեց՝ դիմել ՀՖՖ ղեկավարությանը Արթուր Գևորգյանին ընդունել աշխատանքի ՀՖՖ-ում <<Գյումրի աղջիկներ 2>> թիմում, որպես մարզիչ ս/թ նոյեմբերի 1-ից: Արթուր Հարությունյանի <<Հրազդան Ա.Հ>>թիմի մարզիչի հարցը հետաձգել և քննարկել 4-րդ եռամսյակի ավարտին:

8. Որոշվեց՝Կանանց ֆուտբոլի ամառային մրցաշարում լավագույն ֆուտբոլիստների ցուցակը հաստատել ըստ խաղադիրքերի:
9. Ընդունել ի գիտություն
10. Ընդունել ի գիտություն

Նախագահ **Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Քարտուղար **Խ.ՁԱՐԳԱՐՅԱՆ**